Վահագն Հովակիմյան

ԿԸՀ նախագահ

HovakimyanV@elections.am

+37410 543503

Ծնվել է **1974**թ. հունիսի 30-ին Երեւանում:

1991 թվականին ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցը:

1991-1993 թթ. սովորել է ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետում:

1993-1995 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

1996-2000 թթ. սովորել է ԵՊՀ փիլիսոփայության, սոցիոլոգիայի, հոգեբանության եւ քաղաքագիտության ֆակուլտետում:

2021 թվականին ավարտել է Խորենացու անվան համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի հեռակա բաժինը:

Աշխատանքային գործունեություն

1998-1999 թթ. աշխատել է «Օրագիր» օրաթերթում, որպես լրագրող:

1999-2012 թթ. աշխատել է «Հայկական ժամանակ» օրաթերթում որպես լրագրող:

2012-2013 թթ. հանդիսացել է «Դարեսկիզբ» ՍՊԸ տնօրեն: Զուգահեռ զբաղեցրել է նաև «Մեր տպարանը» ՍՊԸ փոխտնօրենի պաշտոնը:

2012-2015 թթ. հանդիսացել է ՀՀ ԱԺ պատգամավոր Նիկոլ Փաշինյանի օգնականը:

2013-2014 թթ. աշխատել է «Panorama.am» կայքում որպես քաղաքական մեկնաբան: 2014-2016 թթ. աշխատել է «Ժողովուրդ» օրաթերթում, որպես փոխխմբագիր:

2017-2019 թթ. հանդիսացել է ՀՀ ԱԺ «Ելք» խմբակցության փորձագետ:

2018թ. սեպտեմբերի 23-ին ընտրվել է Երեւանի ավագանու անդամ, 2018թ. հոկտեմբերի 17-ին հրաժարական է ներկայացրել:

2019-2021 թթ. ՀՀ ԱԺ պատգամավոր՝ «Իմ քայլը» խմբակցության, ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ:

2021-2022 թթ. ՀՀ ԱԺ պատգամավոր, ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ:

2022 թվականի հոկտեմբերի 7-ին ՀՀ Ազգային Ժողովի որոշմամբ ընտրվել է ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ:

Ամուսնացած է, ունի երկու զավակ: